

Հայ գրականության մարզային օլիմպիադա

Հարցաշարերի պատասխաններ

9-րդ դասարան

1. V դարը մեր ժողովրդի պատմության Ոսկեդարն է: V դարասկիզբը միաժամանակ մեր պետության կորստյան ժամանակաշրջանն էր և այնուհետ՝ գրեթե 5-դար, մենք չունեցանք պետականություն, ու մեր հայրենիքը ապրելու իր իրավունքը նվաճեց միայն իր դպրությամբ, պատմագիտությամբ, թարգմանչական անընդգրկելի աշխատանքով:
- Չնայած Հայաստանը կորցրել էր պետականությունը, բայց մեր երկրում տեղի ունեցան այնպիսի հրաշագործություններ, որոնք ապահովեցին հայ ժողովրդի երթը դեպի հավիտենություն: Այդ հրաշքերից մեծագույնը հայ գրերի գյուտն էր, որն իրականություն դարձավ հայերենի առաջին ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի ահըստգյուտ գյուտով: 405-ին Մաշտոցը արարեց մեր գոյության իրավունքի անձնագիրը, որը մեզ փրկեց կործանումից, ուժացումից, պատմության բեմահարթակից վերանալուց:
- Օջականի սուրբ ննջեցյալի կյանքի ու գործունեության մասին առաջին վկայությունը նրա աշակերտ Կորյունի «Վարք Մաշտոցի» մատյանն է, որտեղ աշակերտը սրբազան երկյուղածությամբ պատմել է իր ՌԻՍՈՒՍԵՅԻ ՎԱՐՔՈՒ (կենսագրությունը), գործունեությունը: Կորյունը մատյանը գրել է Մաշտոցի իսկ հրամանով կաթողիկոս դարձած Հովսեփ Վայոցձորեցու պատվերով: Կորյունը Մաշտոցի հանձնարարությամբ ուսուցչությամբ է զբաղվել Հայաստանի գավառներում:
- 443-450 թվականներին գրել է Մաշտոցի կենսագրությունը՝ ներկայացնելով Մաշտոցի անձն ու գործը: Մաշտոցը ներկայացված է իբրև ուսուցիչ, լուսավորիչ, քարոզիչ:
- Կորյունը, ի դեմս Մաշտոցի, կերտել է հայ կրթական, լուսավորական գործչի, գաղափարական հերոսի առաջին պատմագեղարվեստական կերպարը: Աշակերտ Կորյունը ուսուցիչ Մաշտոցի կյանքի ու գործի ուղեկիցն ու ականատեսն է, նրա պատմությունը հավաստի է, իր ուսուցչի հետ նա կատարել է թարգմանական լայնածավալ աշխատանք, մասնակցել V դարի վիթխարի գրական-մշակութային շարժմանը:
- Նրա ստեղծած կերպարին հետագայում անդրադարձել են Բուզանդը, Խորենացին (Նույնպես Մաշտոցի աշակերտներից), միջնադարի մի շարք մատենագիրներ(Կիրակոս Գանձակեցի,Մովսես Կաղանկատվացի), իսկ Նոր ժամանակներում Մաշտոցի մասին ստեղծվել են բազմաթիվ գիտական աշխատություններ, վեպ, պոեմներ ու բանաստեղծություններ. Դերենիկ Դեմիրճյան, Սիամանթո, Պարույր Սևակ, Հովհաննես Շիրազ, Սիլվա Կապուտիկյան և այլք:
- Բազմաթիվ բանաստեղծություններ են նվիրվել նաև հայոց այբուբենին՝ Գևորգ Էմին, Ժիրայր Ավետիսյան, Գուրգեն Մահարի և ուրիշներ:
2. Եղիշեն Ոսկեդարի հինգ պատմիչներից մեկն է, ով հայտնի է իր «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմի » աշխատությամբ:

Եղիշեն եղել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից և ուսանողների առաջին խմբի հետ եղել է արտասահմանում՝ հմտանալու թարգմանական արվեստի և ընդհանրապես գիտության մեջ:

Նրա անունը հիշատակվում է Միհրներսեհի թղթին մերժողական պատասխան տվող 18 եպիսկոպոսների մեջ՝ «Եղիշա՝ Ամատունյաց եպիսկոպոսը»: Սակայն այս հիշատակումը այնքան էլ համոզիչ չէ, քանի որ ինքը՝ Եղիշեն, իր աշխատության մեջ հիշատակում է, որ ինքը ականատես ու մասնակից է եղել Ավարայրի ճակատամարտին:

Եղիշեն ծնված պիտի լինի 410-415թ.թ., քանի որ ուսման է մեկնել մոտ 20-տարեկանում, իսկ ուսում ստանալուց հետո Վարդանի, հավանաբար նաև ամբողջ Մամիկոնյան տոհմի, քարտուղարն է դարձել:

Իր պատմությունը ամենայն հավանականությամբ Եղիշեն սկսել է պատերազմից անմիջապես հետո՝ թարմ տպավորություններով, բայց ավարտել է բավականին ուշ: Պատմությունը գրելու պատվեր նա ստացել է Մամիկոնյան Դավիթ երեցից, որի ինքնությունը ստուգապես հայտնի չէ, Եղիշեն նրան ներկայացնում է բանիմաց ու բազմափորձ:

Եղիշեի մատյանը գրված է շքեղ հայերենով, գրավիչ լեզվով, պատկերավոր նկարագրություններով: Այն Մամիկոնյան տոհմի փառաբանությունն է և, բնական է, որ Դավիթ երեցն էլ, լինելով Մամիկոնյան, մեծ դեր է ունեցել այս գիրքն ստեղծելու գործում:

Եղիշեն նկարագրել է Ավարայրի ճակատամարտը՝ նշելով . «Ահա մեր կամքի հակառակ արտասովորից ողբով շարադրում ենք այն բազմաթիվ հատվածները, որոնց մեջ հենց մենք էլ ընկանք՝ ականատես լինելով»: Իր գրքում Եղիշեն ներկայացնում է հայրենյաց պաշտպան սպարապետ Վարդան Մամիկոնյանին և իր ընկերներին և այդ ժամանակ հայոց մարզպան Վասակին և իր ընկերներին:

Վարդանը և իր ընկերները կռվում էին «Վասն հայրենեաց, վասն հաւատոյ» կարգախոսով, իսկ Վասակ Սյունին փորձում էր կասեցնել պատերազմը՝ հուսալով ժամանակ շահել: Եղիշեն կարծում է, որ Վասակը «իր ներքին մտադրություններով հեռացած չէր հեթանոսների ուխտից» և համագործակցում էր պարսիկների հետ՝ ավերելով «Չայոց աշխարհի շատ տեղեր»:

Իսկ հայոց սպարապետ Վարդանը իր շուրջն է համախմբում հայոց զորքն ու ժողովուրդը և դուրս գալիս արդար պատերազմի: Նա սրտառուչ խոսքով դիմում է իր քաջ նիզակակիցներին՝ չերկնչել և չվախենալ հեթանոսների բազմությունից:

Պատմական դեմք է նաև Ղևոնդ երեցը, որը, ղևոնյանների գլուխն անցած, հավասար կռվում էր Վարդանի հետ:

451-թվականի մայիսի 26-ին Տղմուտ գետի ափին՝ Ավարայրի դաշտում, սկսվում է կենաց ու մահու կռիվը, որտեղ ոչ մի կողմը ո՛չ հաղթում է և ո՛չ էլ պարտվում: Վարդանը, Եղիշեն, Ղևոնդը և Ավարայրի 1036 նահատակները հետագայում դասվում են սրբերի շարքը, իսկ Վասակը դատապարտվում է անարգ մահվան հենց պարսիկների կողմից:

Ավարայրը կրկնվեց 1457 տարի անց Սարդարապատում և 1540 տարի անց՝ Արցախում:

Հայ ժողովրդի բազմաթիվ քաջորդիներ հերոսացան, սակայն ես ուզում եմ խոսել....(Մնացյալը` աշակերտը)

3.«Էպոսը ժողովրդի պատմական բանաստեղծությունն է կամ բանաստեղծական պատմությունը»: Բնորոշումը մեծ հայագետ Մանուկ Աբեղյանինն է: Եվ, իսկապես, մի ժողովրդի ծագմանն ու կազմավորմանը ծանոթանալու համար պետք է կարդալ այդ ժողովրդի Էպոսը: Այսպիսինն են ռուսների «Իյա Մուրոմեցը», հույների «Իլիականը» ու «Ոդիսականը», պարսիկների «Շահնամեն», ասուրաբաբելական «Գիլգամեշը», գերմանացիների «Նիբելունգների երգը», անգլիացիների «Ռոբին Հոդը», ֆրանսիացիների «Ռուլանդի երգը», վրացիների «Վագրենավորը» և այլն:

Հայ ժողովրդի հերոսական Էպոսը հյուսվել է 7-10-րդ դարերում, երբ մեր ժողովուրդը ազատագրական պայքարի էր ելել արաբական զավթիչների դեմ: Բայց Էպոսի արմատները գնում են մինչև վաղնջական ժամանակներ, մինչև առասպելական ուժ ունեցող ջրածին կամ հողածին հսկաների ժամանակները:

Մեր ժողովրդի Էպոսը բաղկացած է 4-ճյուղից, որոնք կոչվում են գլխավոր հերոսների անուններով` «Սանասար և Բաղդասար», «Մեծ Միեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Միեր»: Էպոսը կոչվում է «Սասնա ծռեր», իսկ համահավաք տեքստը, որ լույս տեսավ Էպոսի 1000-ամյակի առթիվ` 1939-ին, կոչվում է «Սասունցի Դավիթ», քանի որ մեր ժողովուրդը դարերի իր երազանքը խտացրել է գլխավոր հերոս Դավթի մեջ:

Դավիթը ազնիվ է, անաչառ, քաջ, բարի ու կարեկցող, ներողամիտ է ու երախտապարտ, միաժամանակ անզիջում ու համառ, կատաղի և չհանդուրժող, երբ վիրավորում են մեր ազգային արժանապատվությունը, ձեռք են բարձրացնում մեր ազատության ու անկախության վրա:

Նա չափազանց զգայուն է, միամիտ ու հավատավոր:

Դավթի մեջ խտացած են մեր ժողովրդի լավագույն հատկությունները, նաև ծուռ – խենթությունը, պարզ մանկականությունը:

Այս հրաշալի հատկանիշների և ազատասիրության համար մեր Էպոսը 1964-ին կայացած Էպոսների մրցույթում գրավել է I-տեղը:

Էպոսի մասին առաջինը հիշատակել են 16-րդ դարի պորտուգալացի ճանապարհորդներ Մ.Աֆոնսոն և Ա. Տենրեյրոն: Իսկ հայ իրականության մեջ Էպոսի պատումներից մեկը` «Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ»

վերնագրով առաջին անգամ 1874-ին գրի է առել մեծ երախտավոր Գարեգին Սրվանձտյանը: Մի այլ պատում` «Դավիթ ու Միեր» վերնագրով 1889-ին գրի է առել Մանուկ Աբեղյանը:

«Սասնա ծռեր» վիպերգն ունեցել է մի շարք գրական մշակումներ` Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Եղիշե Չարենց, Նաիրի Չարյան, Դ.Վարուժան և այլք:

Լավագույնը մեծ լռեցու «Սասունցի Դավիթ» պոեմն է, որտեղ հեղինակը, հարազատ մնալով վիպերգին, ներկայացրել է մանուկ Դավթին` միամիտ, պարզ ու շիտակ, համարձակ, անհնազանդ ու արժանապատիվ:

Իր միամտության շնորհիվ Դավիթը փրկվում է Մսրա Մելիքի ճիրաններից, երբ կրակը նրան ավելի է հրապուրում, քան ոսկին, երբ կռվում է

պատուհանից ներս թափանցած արևի շողքի հետ: Նա գառնարած է, սակայն չի տարբերում նապաստակը ուլից, հետո նախորդ է և գազաններով լցնում է քաղաքը, քանի որ չի տարբերում գազանը նախիրից:

Նա ժառանգում է իր նախնյաց ուժը, բնավորությունը՝ հերոսական, անշահախնդիր, ազատամիտ, մարդասեր ու բարի:

4.Ալեքսանդր Շիրվանզադեն (Շիրվանի որդի) ծնվել է Շամախի գավառական քաղաքում դերձակի ընտանիքում:

ՈՒՆԵԳԵԼ Է տխուր մանկություն և պատանեկություն: Նա բավարար կրթություն չի ստացել. նրա ուսուցիչները եղել են գրականությունը, ազատամիտ ուսանողները, Բաքվի բանվորական միջավայրը:

Շիրվանզադեն իրապաշտ գրականության սկզբնավորողներից էր, նրա ստեղծագործությունը հայ իրապաշտական գրականության բարձրագույն նվաճումներից է: Հարուստ է գրողի պատկերած կյանքը . գավառական կյանքի պատկերներից մինչև արդյունաբերական քաղաքի պատկերներ, նրբահյուս հոգեբանական պատկերներից մինչև գռեհիկ խաբեություն ու խարդախություն:

Շիրվանզադեի լավագույն վիպակներից է «Արտիստը», որը նա գրել է Օդեսայում, ուր աքսորվել էր ցարի դեմ կազմակերպված խժոժություններին մասնակցելու մեղադրանքով:

Նավահանգստային քաղաք Օդեսան XX դարասկզբին նաև արվեստների շքեղ կենտրոն էր, ուր հյուրախաղերի էին գալիս ժամանակի նշանավոր դերասանները, երգիչ-երգչուհիները:

Գրողը նկարագրում է մի միջավայր, ուր ապրում էին տարբեր ազգությունների տեր մարդիկ: Այդ մարդկանց մեջ նա ճանաչում է Լևոնին՝ վիպակի գլխավոր հերոսին:

Նա 15-17 տարեկան պատանի էր՝ ներս ընկած կրծքով, գանգուր մազերով, խոշոր, փայլուն ու տխուր աչքերով. Նրա գեղեցիկ աչքերում ծվարել էր անանց մի տխրություն:

Նա անչափ արվեստասեր ու երաժշտասեր պատանի էր՝ «ոտքից գլուխ արտիստ», «նրա օրը, կերակուրը, կյանքը, ամեն ինչը թատրոնն էր», այնտեղ էր նա գտնում իր երազող հոգու խաղաղ հանգրվանը: Լևոնին բոլորը սիրում և գնահատում էին, որովհետև «նա ազնիվ էր՝ որպես նորածին, և զգայուն՝ որպես քնարի լար»:

Օդեսա եկած նշանավոր արտիստների համար նա ապահովում էր առաջին ծափահարություն, փառք և նաև դրա մեջ էր գտնում իր կյանքի իմաստը: Ապրում էր հիվանդ մոր հետ, ով որդու նկատմամբ ունեցած հիվանդագին սիրուց դարձել էր բռնակալ խեղճ պատանու համար:

Նրա հայրը եղել էր թատերական վարսավիր, ով անհույս սիրուց իրեն տվել էր հարբեցողության և կործանվել: ՈՒ այրի Ալմաստը սարսափում էր, որ որդին կգնա հոր ճանապարհով, այդ պատճառով էլ խոչընդոտում էր նրա թատերասիրությանը: Շնորհալի պատանին մանդոլին ու կիթառ էր նվագում: Ինքն էլ սիրահարված էր գեղեցկուհի Լուիզային, ով քրոջ ջերմությամբ էր կապված Լևոնին: Մի անգամ նա լսում է «Մադրիդի շրջմովիկը» մեղեդին և մի գիշերում սովորում նվագել: Այդ մեղեդին տխուր էր, պատմում էր մի

դժբախտ շրջմովիկի մասին, ով ցուրտ գիշերներին երգել է գրանդի աղջկա լուսամուտի տակ և լաց եղել:

Երաժիշտը, ով նվագել էր մեղեդին վիոլենչելով, այսպես էր պատմել Լևոնին այդ մեղեդու պատմությունը: Պատանին խիստ նմանություն էր գտել իր հոր, իր և Մադրիդի շրջմովիկի ճակատագրերի միջև և մի առանձին ներշնչումով էր նվագում մեղեդին՝ դրա հնչյունների մեջ ներդնելով իր հոգու ողջ տխրությունն ու դառնությունը:

Երբ նա նվագել էր հեղինակի համար, «վիշտ ու բերկրանք, փոթորիկ ու մեղմ թախիծը խառնվել էին իրար», իսկ Լևոնի հոգին «ամբողջովին ձուլվել էր նվագած եղանակի հետ ու տարել հեռու մի աշխարհ՝ ընտիր հոգիների կախարդական աշխարհը»:

Այս տաղանդավոր ու դժբախտ պատանին նույնպես արժանանում է դաժան ճակատագրի, ինչպես մեղեդու հերոսը, նրա սառած մարմինը գտնում են «Խերսոն » նավի տակ, որը նրան պետք է տաներ այն հեռու ու կախարդական աշխարհը՝ Իտալիա, ուր գնացել էր Լուիզան:

Լևոնն ապրում էր սոցիալական ծանր պայմաններում, աղքատ պատանու տաղանդի նկատմամբ անտարբեր հասարակության մեջ, որը չարաշահում էր նրա ազնվությունը, նվիրումը, սերը, նա «ադամանդ էր ցեխի մեջ»: Երկու անգամ կողոպտվելը, մոր բռնակալ սերը, Լուիզայի ամուսնությունը դարձան նրա կործանման պատճառը և, նա ինքը դարձավ Մադրիդի շրջմովիկը:

Գնահատման չափանիշներ 9-րդ դասարան

1 հարց- 1,2,3-րդ՝ 0,5-ական միավոր, 4-րդ՝ 2 միավոր, 5-րդ՝ 1,5 միավոր:

2 հարց- 1-ին՝ 1 միավոր, 2-րդ՝ 2 միավոր, 3,4-րդ՝ 1-ական միավոր:

3 հարց- 1,2,3,4-րդ՝ 0,5-ական միավոր, 5-րդ՝ 2 միավոր,
6,7-րդ՝ - 0,5-ական միավոր:

4 հարց- 1,2-րդ՝ 0,5-ական միավոր, 3-րդ՝ 1 միավոր, 4-րդ՝ 0.5 միավոր,
5-րդ՝ 1 միավոր, 6-րդ՝ 1,5 միավոր: